

Տարեկան գիշեր 10 րուրլի, կէս տարվան 6 րուրլ.
Առանձին համարները 5 կօպէկով.

Թիֆլիսում զրկում են միմիայն խմբագրասուն մէջ.

Մեր հասցեն. Տիֆլիս, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.

Խմբագրութիւնը բաց է առաջատարական 10—2 ժամէ
(բացի կիրակի և տօնն օրերից)

Յայտարարութիւնը լուսունավում է առևնի լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչեր բառին 2 կոսէկլ.
Տէլէֆօն № 253.

ԱՐՄԵՆԻԱ

ՀԵՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՁՐՈՒՆԻ

ԲԱՑԿԱԾ Ե ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՆԵՐԿԱՅ 1898 ԹԻԱԿԱՆԻ

ՄԵՐԿ

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԴՐ

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 բուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ր., ինն և ութ ամսվանը՝ 8 ր., եօթ ամսվանը՝ 7 ր., վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր., մի ամսվանը՝ 1 բուբլի:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրլիրու համար, և առհասարակ նամակներ դժբաններ ուղարկելիս, պէտք է զիմել հետեւալ հասցեով. **ТИФЛИССЬ**, редакция «МШАКЪ», խելացանութիւն՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են թէ Հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով:
Բառին վճարվում է շատէկ:

Ներկայ մարտ ամսի 2-ին Սուխումում կնքեց իր մահկանացում՝

Յ Ա Վ Հ Ա Ն Ն Ե Ս Ս Ի Մ Ե Օ Ն Ե Ա Ն Ս Տ Ե Փ Ա Ն Ե Ա Ն Ց Ը

Մարմնի աեղ հասնելուն, հոգեհանգստի և թաղման մասին առանձին ծանուցումն կը վիճ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԲԱԻԱԿԱՆ ԶԵ՞Ն ԱՐՎԱԾ ԶՈՀԵՐԻ

Բաւական չե՞ն արված զո՞ները. — ՆԵՐԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. Ազատ-անտեսական ընկերության
նիստը. «Երամապահութեան և սատացնադրո-
ծութեան ընկերութիւն», Դիւզական փոխառու-
թանկ. Մատենագրութիւն. Նամակներ Խմբագրու-
թեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Իտապական սահմանադրութեան տարե-
գարձր. Նամակ Թիւրքիայից. Սրբագին լուրեր.
ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՒՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱ-
ՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Ա-
մերիկայից. Ներսէս Վ և իշխան Վօրոնցով.

Այն ծախսը, որ ամեն մի քաղաքացի, ամեն մի մարդ և ընտանիք անում է առօնեայ պէտքերի առարկաներից շատերի լրա, գիցուք շաքարի, բամբակի, երկաթի, զանրի և ուրիշ նիւթերի վրա, անհամենատ շատ քիչ կը լինէր, եթէ հովանաբարձր մաքս երը դոյութիւն չունենային, և եթէ թոլլատրված լինէր աղատ կերպով կառու զերպով, մրնչու որ արդիւսագործութիւնը արմաններ զցի երկրի մէջ, հաստատվի և գործարանատէրերը ոչ միայն ընտելանան գործին, այլ և էժանայննեն արդիւնաբերութիւնը:

լիսաոր իր նաւերուն ամենէն գեղեցիկներէն մինչ դոչիչանայ այնքան կեանքերու հետ, լուել, կըսմն ամերիկացիք, վասութիւն է: Օրեր առաջ նաւաստիներ ու պաշտօնեաներ սպառնալիքներ կը սէին սպանիացիներէ, ամերիկացւոց դէմ սաստիկ յուզում և թշնամութիւն ցոյց կը տրուէր, «Մէյնին» թոյլ չէր տրուիր նաւահանգատին մէջ իր տեղէ շարժիլ. «Թորփիներով շրջապատկած նոր, կը գրէ եղեր նաւաստի մը իր կոսջ, և երբէք պիտի չը զարմանամ, եթէ օր մը «Մէյնը»

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՑԱ

Պօստօն, փետրվարի 28-ին
Հետագիրը արգէն ձեզ իմացուցած է Միացակալ նաւահանգաց մարտանաւ. «Մէջնի» ողբերգական վախճանը: Չորս հինգ օրէ ի վեր ամրացն Ամերիկան այդ խնդրով կը զբաղի: Սկիզբէն կը կարծուէր թէ քանի որ մարտանաւը արկածի մը զո՞ւ գնացեր է, յանցանքը միայն նաւապետին ու պաշտօնէից վերագրելու է. սակայն օրէ օր լրագրաց հասած տեղեկութիւնք, ոխալ թէ ուղիղ, կը հաստատեն թէ «Մէջնը» օդը հանված է թորփիրով մը: Նախագահը և նաւային գործոց գրագիրը ճարտար սուզակներ և մեքենագէտներ դրկեցն Քուպա քննութիւն կատարելու: Հավանա կը գտնուի նաև նշանաւոր նաւապաշտօներէ կազմված քննութեան դատարան մը, որը ամեն հետազոտութիւն կատարեկ վերջ պիտի արձակէ իր վճիռը: Այդ վճիռն կախում ունի հազարներու կեանքը և երկու

մը յուղու ու թշուասովուն ցոյց կը արւուր, «Մէջնին» թոյլ չէր արուիր նաւահանգստավոն մէջ իր տեղէ շարժիլ. «Թորփիիներով շրջապատված ենք նոս, կը գրէ եղեր նաւաստի մը իր կնոջ, և երբէք պիտի չը զարմանամ, եթէ օր մը «Մէջնը» օդը հանեն: Զի գիտցուիր թէ իրաւ զարմացաւ խեղճ մարդը, երբ իր քննացած տեղէն 40 ոսք վեր նեխովեցաւ բոցերու և երկաթի կտորներու նետ, թու զգացին այդ կորիճ նաւազները, երբ ծավ ու կրակը կուլ կուտացին իրենց մարմնոյն բեկորնելը: Նաւապետն ու պաշտօնեաներուն մեծ մասը ապատեր են, չնորդիւ օգնութեան փութացող նաւակներու, մեռածներէն զատ կան նաև 40-ի չափ վիրաւորներ, որոց մը քանին ալ անցոյս վիճակի մէջ են: Ո՞վ պիտի վճարէ այս ամենուն փոխարէն, եթէ արկած էր—նաւապետը, եթէ թորփիլ—Սպանիան, իսկ եթէ նաւահանգստին երկաթապատ ականներէն մին պայմանագիրի պատմութիւնը մեզ ամենէն մօտ պատմական դէպքը կը նկատեն: Այսօրվան օրա-

Նիւ-Եօրք «Ճերնոբլ» օրաթերթը 50,000 դօլար թերթերը այդօրինակ քաղաքական քարտումերու խոստացեր է յանցաւոր ոճրագրով գտնողին, մի անմերջ շարք հրատարակած են. խաղալութեան պաշտօնեաները իսկ արդարութիւն և վրեժ քարոզիցին երեկ, ամենէն պահանջողականը պիտի կարելի ըլլայ երեան հանել. ծովը գաղտնիքները շատ ունի և թերես տարաբախտ «Մէյնը, մի քանի օր ալ սպասեցէր ըստ: Երբ խաչին կութիւնը այդ կառաղութիւնը աստիճան: մը աւելի բորբոքելու կը ծառայեն: Եւ երբ նկատի առնենք ամեն պարագայ, զէպքին եղակի երևոյթը պատմութեան մըջ, թերես չը մեղադիմքեաներու այդ գաղցւմը: Գիշեր առեն, այսպիսի գաւաճան եղանակով 250-էն աւելի մարդոց սոսկալի մահը հասարակ զէպք մըջ. Ամերիկան արդէն չափէն աւելի համբերած է իր քաղաքացւոց կրած վնասներուն համար Քուպայի մէջ և երբ ալսոր նոն կուռսուն նաւահան-

ւտութիւնը, այլ նայում են գործի վրա
այն իրանց նեղ, անձնական շահերի տե-
սկէալից, այն ժամանակ անհրաժեշտու-
թիւն է զգացվում յետ նայել և վերաբննել
է արդեօք գործը արժանի՞ է այն զոհե-
նն, որոնք կատարվում են: Արդեօք ձեռն-
ով է երկրի համար ստիպել, որ 130 մի-
օն ազգաբնակութիւնը գնի թանգ շա-
ար և երկաթ, միայն այն պատճառով,
ո 100 կամ 200 գործարանատէր կարո-
անան աջող կերպով առաջ տանել իրանց
անօնաւոր ձեռնարկութիւնը, արդեօք ա-
ելի օգտաւէտ չէ՞ լինի դոհել այդ փոք-
աթիւ գործարանատէրերին այն միլիօնաւոր
ողովրդի օգտին, որ կրում է բոլոր ծան-
ութիւնները:

էս են եկել Ռուսաստանում, որովհետեւ
ործարանատէրերին տրված ժամանակաւոր
որտօնութիւնների պայմանաժամը արգեն-
տանում է մի քանի տեսակ գործարանների
համար և նրանք պէտք է զրկվեն այն ձրի
գուաններից, այն շնոր հներից, որ վայելում
ին մինչեւ այժմ։ Սյդ գրութեան մէջ են,
րինակ, չուգուն սպառող գործարանա-
էրերը, այդ վիճակի մէջ են շաքարի
ործարանատէրերը։ Բարեխզծութիւնը թե-
ափում է, որ այդ մարդիկ իրանք գի-
ւին կառավարութեան և ասէին։ «Շնոր-
հակալ ենք անցեալ արտօնութիւնների հա-
մար և այժմ մենք ինքներս կարող ենք
ուանց նպաստների առաջ գնալ, օգնեցէք
այժմ ուրիշներին»։ Բայց փոխանակ այդ
սրդարացի յայտարարութեան, նրանք խընդ-
ում են գարձեալ առանձնաշնորհութիւն-
ներ՝ ի հաշիւ միլիօնաւոր ժողովրդի զըր-
անքների։ Բաւական չե՞ն արդեք արգած
ուները, և ժամանակ չէ՞ միթէ ազգաբնա-
ւութեան շահերը գերադասել մի խումբ
հեռարկողների շահերից։

ասամիք ժողովրդի ուշագրութիւնը վրիփեցնելու և մասամբ ալ յանկարծական պատահարներու էմ պատրաստվելու համար զինուորական և նա-ային պատրաստութիւններ կը տեսնէ; Կառա-լարութեան հրամանէն առաջ արդէն կամաւոր տունդեր կապմած են չատ տեղեր և մարզանք ը կատարեն, արևելեան ծովեղերքի բեռներ ամրացվն, նոր թնդանօթներ կը ձուլվն, վա-ւոդ ու դիմումիթ կը պատրաստվի, օդին մէջ պատերազմի հոտ կայ: Կրնայ ըլլալ սակայն, որ մնամ մ'ալ պարապ տեղը վախցած ըլլանք:

Սակայն ուրախալին այն էր, որ այս շփոթու-թեան և տափնապի մէջ Քուպան է որ կը շահի որ ալատութիւնը. կղղեցի պատուամբները այսօր նմերիկայի սրտապին համակրութիւնը կը վայե-նո, քանի այդ համակրանքը գոյութիւն ունի, շուտպացի հայրենասէրնս ըլ պակսիր ոչ զէնք, ոչ լասուգ, ոչ դիմումիթ և ոչ ալ ամերիկացի կամա-րու դիմուր: Արևուտաքի մէջ չարաթներ առաջ իր մեծ շարժում կար, 100,000 կամաւորաց մի անհակ պատրաստել և եթէ հարկ վնի, հակա-ւակ նախազահի կամքին, Քուպայի վրա արշա-ել: Գդացմանց ներկայ վիճակին մէջ եթէ ոչ այլքան դժուարին և եղակի ծրագրեր, գէթ ա-եկի փոքր ու գործնական միջոցներ ձեռք կառն-լին օգնել ըստապացւոց ի վրէծ ամերիկացի նա-

Մինչ այսօր Հավանա, Մաղրիդ և Ուաշինգտոնը պատերազմի վրա կը խորհին ու կը տքնին, առավացի հայրենասէցները նայն փիլիսօփայական անտարբերութեամբ կը շարունակին իրանց սուլորական գործը՝ որ է երկաթուղիներ օգը համել, փոքր ջոկատներով սպանիցներու վրա արձակիլ, շաքարի եղէցի դաշտեր վառել, մէկ նուպով ցոյց տալ թէ Սպանիան Քուպացի տէրը է: Քուպացիք այսօր 36,500 զինեալ կռւող ունին 150,000-էն աւելի սպանիացի զօրաց դէմ: Սակայն յեղափոխութեան սկզբէն ի վեր քուպացիք և ոչ մի օր այսքան զօրաւոր ու վստահ էն:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԶԱՏ-ՏԵՍԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԻԱՑ

Սենք հաղորդեցինք արդէն այն մեծ վիճաբանութեան մասին, որ տեղի ունի կապի տալի զմի վերաբերմամբ Պետերուրդի Ազատ-անտեսական ընկերութեան մէջ: Քետերուրդի 21-ի նիստում, որ նայնպէս բազմամարդ էր, ինչպէս և նախորդ նիստը, խօսեցին Վ. Վ. Վորօնցով և պրօֆէսօր Խօդսկի: Վ. Վ. Վորօնցով յայտնի է ուստաց հրապարակախօսութեան մէջ «В. В.» սոորագրութեամբ և գրել է «Судьба капитализма въ Россіи» անսանով գիրքը, որի մէջ նա աշխատում է ապացուցանել, որ Ռուսաստանի մէջ կապիտալիզմը մեծ աջողութիւն չունի և վնասմ է ուրիշ ճանապարհով, քան արևմտեան Եւրոպայում: Պ. Վորօնցովի հակածառութիւնը մեծ հետաքրքրութիւն պատճառեց Ազատ-անտեսական ընկերութեան մէջ ժողովված հասարակութեան: Նա ապացուցանում էր, որ Ռուսաստանում կապիտալիզմը յարաբերական կամ համեմատական առաջադիմութիւն չէ արել, և թէև կապիտալիզմը աւելացրել է գործարանների աշխատաւորների թիւը, սակայն այդ թիւը, համեմատած Ռուսաստանի աղղաբնակութեան աճման հետ՝ չէ փոխվել կամ շատ քիչ է փոխվել առաջվանից: Օրինակ, 25 միլիոն ժողովուրդ ունեցող Պրուսիայում տասներեք տարվայ ընթացքում 1,200,000 բանուոր է աւելացրել, որ մօտաւորապէս 90,000

Հոգովակ աւելի բանուոր է կազմուամ, քան 120 միլիոն
բնակիչ ունեցող Ռուսաստանում:

Պրօֆէսօր Խօդսկի յայտնեց այն միտքը, որ չը
պէտք է աշխատել անպատճառ որոնել Ռուսա-
տանի մէջ այնպիսի կապիտալիզմ, ինչպէս նկա-
րագրել և բնորոշել է Կարլ Մարկս. այլ պէտք է
ուշի ուշով տսումնասիրել Ռուսաստանի անտե-
սական կեանքը և գործնականացնել նպաստել
աշխատող դասակարգին՝ չը կորցնելու այն ազա-
տութիւնը, որ նա ունի և չը դառնալու գործա-
ռանական մէքենայի հլու հպատակ: Նա առան-
ձին կերպով շեշտեց, որ չը պէտք է Եւրօպայի
մեծ առաջադիմութիւնը վերագրել կապիտալիզ-
մի զարգացման, այլ գլխաւորապէս նրա ընդհա-
նուր կուլորուսական շարժման: Աչա ինչու, նրա
կարծիքով, և Ռուսաստանի առաջադիմութիւնը
ցանկացողները չը պէտք է Տուլյան-Քարանօվս-
իու նման գովեստներ կարդան կապիտալիզմի
իրկարար և բարեփոխիչ աղբեցութեան, այլ աչ-
քի առաջ պիտի ունենան աւելի հիմնական հան-
դամանքներ:

ՆԻՐԱԿԱՐԱԳՈՐԾՎԱԿԱՆ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԱՐԱԿԱՆ

Իշխան Վորօնցովին այլ ևս վիճակված չէր վե-
ատառնալ Կոմիսար, որին նա այնքան բարերա-
ռութիւններ էր արել: Տարի ու կէս մնալով ար-
տասահմանում, նա ոչ միայն չը բժշկվեց, այլ
այնպիսի դրութեան մէջ ընկաւ էր հիւանդա-
նեան պատճառով, որ ստիպված էր հրաժարվել
առվասեան փոխարքայի պաշտօնից: Ահա ինչ էր
ա գրում Ներսէսին Դրէզդէնից, 1854 թ. նոյեմ-
երի 12-ին:

«Զերդ Վեհափառութիւնն: Խնձ համար աւալի է սկսել այս նամակը և ասել ձեզ այն, նչ դոք արգելն գիտէք իմ զրովեան և դիտարովթեան մասին: Աստուծուն հաճոյ չեղաւ ամպանել իմ առողջութիւնը ամնպէս, որ ես կարունամ ծառայել առաջվաց պէս, իսկ ծառայել խայն անունով և թոյլ կերպով ինձ մինչար է, անհաւանդ որ իմ ծառայութիւնը այդ դէպքում չ միայն օգտակար չէր լինի երկրի համար, այլ ոյն իսկ վնասակար կը մնէր: Դոյք գիտէք թէ նչ էի ես միշտ ասում յարգելի գեներալ Պափշելի մասին, չը նայած այն յարդանքին, որ ես ածում եմ դէպի նրան. ես բոլորին չի արող նրա պէս մնալ Թիֆլիսում այն ժանակակար, երբ բոլոր սահմանների վրա պահապահմական գործողութիւններ են կատարվում մեր քաջ զօրքերը ամեն տեղ կուռում են և սղթում թշնամուն: Իսկ լինել նրանց հետ և առայել այնպէս, ինչպէս ծառայել եմ մինչև 853 թւականը, ես այլ ևս կարողութիւն չունեմ, ևսոի ամենամեծ վշտով և հոգեկան ախրութեամբ ես ակամայ պարտաւոր էի խնդրել Թաւորից ազատել ինձ իմ պաշտօններից, որոնք մ ոյմերից վեր են, մանաւանդ որ թէս ես շատ անսպ չեմ գնահատում իմ կեանքը և միշտ պատաստ եմ եղել զոհել նրան հայրենիքի օգտի համար, բայց, ինչպէս վերե ասայի, կատարելապէս ամողված եմ, որ իմ նախակին ասպարէցում ինձ ողները կարող էր վնաս պատճառել, իսկ ինձ

«ՇԵՐԱՄԱԳԱՀՈՒԹԵԱՆ ԵՒ ՈՍՏԱՅՆ
ԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ»
(Նամակ Քու (Ժայինց))

Փետրվարի

Խնչակէս յայտնի է, մի տարի առաջ Վում կազմիվց «Ներամապահութեան և ագործութեան ընկերութիւն»: Նորեքուութիւն ունեցանք ծանօթանալու այդ հեան ծրագրի հետ և տեսնելու նրա առցը: Ընկերութիւնը աչքի առաջ ունի պատահիները. 1) Տարածել Քութայիսի ում մետաքսի, բրդի, վուշի, բամբակի ործուածքների արտադրութեան կարծված ձևերը; 2) Պատրաստել և սեղական ազգաբնակութեան մէջ չերող սերմ. տարածել նոյնակէս բամբակը և վուշի լաւ տեսակի սերմերը; 3) Ազգաբնակութեան մէջ ստոյնագրուատարելագործված գործիքներ—զազգանութայնել տեղական շերամապահների աւոր շերամապահութեան հետ, սովորեց մոց բօժօժ չորացնելու, թել քաշելու և սգործութեան կատարելագործված մէջ ուժանրապէս այն ամենը, ինչ որ այս երպ կապված է մետաքսի, բրդի, բամբակի գործուածքների արտադրութեան պաստել տեղական արդիւնաբերութեան օժօժի, բրդի, բամբակի և այլն վաճան:

Այսքանը բաւական ենք համարում այդ

լրելի ընկերութեան ծրագրած ։
սին մի գաղափար տալու համա-
սին լրացաւ ընկերութեան գո-
րին։ Պարզ է, որ այդ կարծ
ջում ընկերութիւնն ամսկարող է
նպատակները ամբողջովին իրա-
աշքի ընկնող ձևունարկութիւնն
արինեստանոցն է, որ բացել է ։
յեալ տարի։ Արհեստանոցն ու
ժամանունքը. մի բաժանմունքում
բօժօժից թել քաշելու չարխիւր
ներ՝ թելլ հաստացնելու համա-
րը, առանց բացառութեան, կա-
են։ Միւս բաժանմունքը զործ
բաստելու տեղն է. այստեղ են
տարելագործված դազգահներն
։ Այս բաժանմունքը յանձնված է
հրաւիրված մի տիկնոց զեկավա-
գորեցնում է բանուոր կանանց
թել մանելու և նրանցից զործ
բաստելու արհեստը։ Գործելու
նեն շատ պարզ կազմութիւն և
տութեամբ շնչվել Թիֆլիսում
Գութայիսում։ Մենք տեսանք
պատրաստած մետաքսեայ զործո-
կանց նրաւութեամբ և հիւսու-
թեամբ համեմատելի անգամ չեն
նման արդիւնքների հետ, որ տա-
գործութիւնը Գութայիսի նահա-

պատճառով էլ այդ գործուածքնեւ
չից տեղումը՝ աւելի ձեռնուու.
բաժանմունքը յատկացրված է բ
տեղ բամբակը մաքրում են կո
թարկելով նրան մամուկի ճնշ
պատրաստում Ռուսաստան ուղ
Այս արդէն բուն վաճառականա
թիւն է և հազիւ թէ տեղակա
թիւնը գրանից կարողանայ մի բ
րաւ է, արհեստանոյց պակաս
զատ չէ, բայց առաջին տարին
յուսալ, որ մօտիկ ապագայում ք
նի իր պակասութիւնները և աւ
իր գործունէութիւնը:

ԳիՒՂԱԿԱՆ ՓՈԽԱՏՈՒ
(Նամակ Հին-Նախիջևան Փետրվարի 17-ին Թմբուլի շինութեանը պօլիցիայի կողմից առաջանալու բանի համար կութիմը բազկացած է հազար ներից, հայ և թուրք: Հազար տ

Ապարի 20-ին թվականին մասնակիութեան մասին օրենքը հայտադրված է առաջին անգամ 1920 թվականի մայիսի 20-ին:

Ս Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն
 «Գիւղամնտեսական գործելքները և մեքենաները» Աւոն
 Խանաղեանին; Հքատարակովին՝ Թիվիլսին հայոց Հքա-
 տարակչական ընկերութեան, գինն է 50 կոպէկ.

«Գիւղամնտեսական գործիքները» այն այխա-

զութիւն։ Այժմ
ացրված է և
չ թէ մինիստ-
այ իշխան Բա-
փ յարգում է
ա այդ բարորի-
ունի ձեզ ա-
եմ, որ ձեր
գնայ... Օդե-
ր գրել ձեզ.

ծու անհասանելի նախախնամութիւնը կառավա-
րում է մեզ։ Ուստի, կատարելապէս ցաւակցե-
լով ձեզ, իմ ամենասարելի մայր և քոյր ի Քրի-
ստոս, աղջում եմ ձեզ չը մատնավել անմիշիթար
վշտին, որ ամենակորստարեր հետեանքների է
հասցնում, այլ հնագաճնդվել տիեզերքի ամենաա-
մաստուն Ստեղծողի կամքին, պահպանել ձեր պ-
ռողջութիւնը, ինչպէս միակ և անգին պարզե,
որ ուզարկել են մեզ երկնացին բարիքները
և ինչպէս մի հատիկ միխիթարութիւն, որ մնամ է

նոքը, ես էլ
հաւատալ իմ
կ, օր օնց օվի:
պատասխանել
արքայ իշխան
իշխան Վո-
գրեց ծերունի
ն, իշխանունի
մեզ հասած կորստից յետոյ: Նուիրելով ձեր պայ-
ծառափայլութեան իմ ամենասանկեղդ յարգանքը
բարեկամական և եղբայրական ի Քրիստոս սիրի/
մնում եմ և այն: Ամենայն հայոց կաթողիկոս
Ներսէս:

Իշխանունին 1856 թւի դեկտեմբերի 13-ի
պատասխանեց հետևեալը.
«Պատկառանկություն և պատպիհն գորովաճարով կար-

26-ին.
Հի Ելիսավես-
ս իր վերջնու
մուտքն և իմ
օվիչ, յայտնե-
նաներ, խոս-
հանները Օգե-
սելով, ես մը-
է շուտով կը
անար արաւ
հվան տխուր
զայծառափայց-
խան Բարեա-
ս խորտակեց
և մեծ է ինձ
լամի և բարձր
պայտ կորուսարը
ասկանում եմ
։ Տոչակառը
ոյց որքան էլ
բառար ենք
որից և մենք
նոնքը և պատ-

դացի ես այն սրբազնի տողերը, որոնցով ձեր
վեհափառութիւնը հաճել էք յարգել նրա յիշա-
տակը, որին դուք անուանեցիք ձեր բարեկամն
Չեր վեհափառութիւնը կարօտ չէ այն համոզման,
որ իշխան Միմապիլ Մեմենովիչ միշտ տածում էր
դէափ ձեզ ամենախորին յարգանք և անկեղծ բա-
րեկամութիւն և որ նա ձեր, իբրև ամբողջ հայ
ժողովրդի կրօնական պետի աջակցութեանն մէջ
միշտ գտնում էր ամենալաւ նեցովկ այդ ժողովրդի
իրան յանձնած մասի բարօրութեան համար աշ-
խատելու ժամանակ, որքան այդ կախված էր նոր-
րանից: Ձեր վեհափառութեան օրնութիւնը իմ
ամուսնու յիշատակի վրա, ձեր աղօթքները նրա
նոցու հանգստութեան համար և Աստուծու ա-
նունով ինձ ուղարկած մսիթարութեան խօսքերը
իմ ամբողջ կեանքի մէջ ամենահաստատուն նե-
ցուկը կը լինեմ անցկացնելու համար այն օրե-
րը, որոնց նախախնամութեանը հաճելի կը լինի
դեռ էլի պարզելի ինձ: Խողոքելու ինձ և իմ երե-
խաների համար ձեր աղօթքները, խորին պատ-
կաւանքով համբուրում եմ ձեր ձեռքերը, և այնու
Չեր աղջիկը ի Քրիստոս իշխանուհի Ելիսավետա
Վ. օր օնց ցովաւ:

տութիւններից մէկն է, որ մնաք կարող ենք
վստահ կերպով առաջարկել մեր գիւղատնտես-
ներն: Դրա մէջ նկարագրված են այն գործիք-
ները և մեքենաները, որոնք հարկաւոր են գալիս
հերթեւու, ցանելու, հնձելու, կասելու և հատիկ-
ները զատելու ժամանակ: Բազմաթիւ նկարները,
որոնց թիւը հասուն է 250-ի, հեշտացնում են
ըմբռնել գործիքների կազմութիւնը և նրանց
գործադրութիւնը: Գործիքների դասաւորութեան
մէջ ուշք է դարձված մեր երկրի գիւղատնտե-
սութեան պահանջների վրա և առաւելութիւն է
տրված այն գործիքներն, որոնք աւելի յարմար
են մեր երկրի պայմաններին: Գործիքների և
նրանց զանազան մասերի անունները յարմարեց-
րած են այն անուններն, որոնք գործ են ած-
վում մեր ժողովրդի մէջ և հնարիված են նոր անուն-
ներ այն գէպքերում, երբ մեքենան և նրա մա-
սերը չունեն համապատասխան ձեւակերպութիւն-
ներ ծողովորդական լեզուի մէջ: Այդ նոր հնարիված
անուններից մի քանիսը անշոշտ ժամանակով
կը փոխվեն, երբ նրանց տեղ կը գտնվեն ուրիշ
աւելի յարմարագոյնները: Մեր գիւղատնտեսու-
թեան ներկայ ընկած դրութեան ժամանակ կա-
տարելագործված մեքենաների տարածելը
պէտք է համարի մի շատ ժամանակակից և օգտաւէտ
գործ: Մեր գիւղատնտեսները պէտք է աշխատեն
օր առաջ ձեռք բերելու այդ կատարելագործու-
թիւնները, որոնցով թէ աւելանում է նրանց
աշխատանքի արդիւնաւորութիւնը և թէ տնտես-
վում է ժամանակը, որ կարելի է գործ ածել
ուրիշ գործերի վրա: Գիրքը տպված է մաքուր և
խնամքով, նկարները դուրս են բերված աջող
կերպով: Հեղինակի լեզուն գիւղը մեջ է:
Տպագրական սխալները շատ քիչ են: Աչքի ա-
ռաջ ունենալով գրքի 230 երես ամփոփը
և բազմաթիւ նկարները, գինը 50 կոտէկ՝ թանգ
չէ:

ՆԵՐՔԻՆ ՀՈՒՐԵՐ

Նրէկ, մարտի 3-ին, Թիֆլիսի քաղաքային ուղղավան ստացաւ հեռագիր Քութայիսի քաղաքավուսի Լօլուայից, որով նա յայտնում է, թէ Քութայիսի քաղաքային դուման, համակրելով Թիֆլիսում պօլիտեխնիկում բանալու մտքին, միաձայն որոշեց՝ տարեկան 1,000 ըստըլի տալ պօլիտեխնիկումն, այն դէպքում, երբ նա կը բացվի:

Սարսի 2-ին, Սուխումի մէջ, վախճանվեց Թիֆլիսի հայոց ինտելիգենցիային պատկանող մի համակրեպի երիտասարդ, Յովհաննէս Ստեփանսեանց, որը մի երկու շաբաթ առաջ գնացել էր Սուխում՝ մասնաւոր գործերով։ Հանդուցեալ երիտասարդը ծանօթ է մեր ընթերցաններին մի շաբաթոցուածներով, որ նա դրել է «Մշակի» մէջ, գլխաւորապէս ծխախոտապորձութեան մասին, որը նրա մասնագիտութիւնն էր։ Բացի դրանից նա մի քանի տարի եղել է անդամ Հրատարակչական ընկերութեան վարչութեան, շատ անգամ ընտրվել է Բարեգործական ընկերութեան վերասաւող յանձնաժողովի անդամ, և ջերմ մասնակցութիւն էր ընդունում Թիֆլիսի հայոց հասարակական բոլոր գործերի մէջ, իբրև ջերմ կուսանեն և համամետ մնա ենթեկան ենթա-

Ապրութեան:

որ պարսից կառավարութիւնը որոշել է եւրօ-
պական բարենորոգութիւններ մտցնել իր մաք-
սային վարչութեան մէջ, ի նկատի ունենալով,
որ պետութեան եկամուտի զլսաւոր աղքակրներից
մէկը մաքսն է; Այդ բարենորոգութիւնները մըտց-
նելու համար նա դեմել է բեղդիական կառա-
վարութեան օգնութեան Յունիվարի 22-ին, Բրիւ-
սէլում, մի պայմանագիր կնքվեց բեղդիական
կառավարութեան և պարսից դեսպանի մէջ, որի
գորութեամբ բեղդիական մաքսային վարչութեան
երեք պաշտօնեաններ յանձնարարութիւն ստացան
կազմակերպել մաքսերի վարչութիւնը ամբողջ
Պարսկաստանում: Այդ պաշտօնեանները՝ պ.պ. Նա-
ուս, Թէօնիս և Պրիմ, արդէն զնացել են Թէհրան:
Նաուս պէտք է լինի «մուգիր», այսինքն ընդ-
հանուր մերատեսուց: Այդ առիթով բեղդիական

լրագիրները մեծ զուսւակութեամբ խօսում. Ան-
Շահի դեսպան Միքայ Զաւադ խամսի մասին,
որը թէ իր կառավարութեան մեծ ծառայու-
թին ցոյց տուեց և թէ Բելգիային հնարաւորու-
թիւն տուեց այդպիսի մի կարևոր միսիա ստանձ-
նելու:

Թիֆլիսի քաղաքացին դուման մարտի 2-ին
որոշեց՝ սալայատակել Թիֆլիս քաղաքի փողոց-
ները քաղաքի հաշով։ Խնչպէս յայտնի է, մինչեւ
այժմ փողոցների սալայատակելը կախված էր
տաճառէրերի բարի ցանկութիւնից և կատարվում
էր նրանց ծախքով։ Քաղաքի կենտրոնական մա-
սերի տաճառէրերը, իրեն աւելի զարդացած, ա-
ւելի ապահովված մարդիկ, վաղուց սալայատա-
կել են իրանց փողոցները, իսկ քաղաքի հեռա-
ւոր, խոշ և աղքատ մասերը մնում էին ատանց
սալայատակի։ Քաղաքացին դուման, յօյս չունե-
նապով, որ առաջվայ եղանակով քաղաքը շուտով
սալայատակի, վճռեց իր վրա վերցնել ամբողջ
ծախքը և այդպիսով թէ չքանոր զառակարգին
օգնել և թէ վերջապէս բարեկարգել մեր փողոց-
ների անտանելի դրութիւնոր։

Թիգլիսի «Այգեգործական ընկերութիւնը» խովրած է մեզ յայտնել, որ այսօր, չորեքշաբթի, Տեսական համար 71/ ժամանակ՝

պահական կայսրամասի դաշլիճութ տեղի կունենաց
Սյգեգործական ընկերութեան հերթական նիստը,
որի պարապմունքի առարկաները կը լինեն՝ 1)
ընթացիկ գործեր, 2) Սպեշնելի զեկուցումը
«1897 թւի խաղողի բերքի մասին» և 3) «զե-

Մայրաքաղաքի լրագիրների ասելով, դարձանը
Պետերբուրգ պէտք է գան դանիացի մի խումբ
գիտնականներ, որոնք ուսւաց հնագիտների հետ

Այս օրեւոս Պետերբուրգում լոյս տեսաւ Մով-
սէս Խորենացու «Հայոց Պատմոթեան» աշխար-
հաբար թարգմանութիւնը, որ կատարել է Խո-
րէն եպիփառու Ստեփանէ: Սա երկրորդ և
լրացրած տպագրութիւնն է:

Առաստ ձիւնը, որ այս տարի եկաւ Թիֆլիսի
նահանգում, սպառնում է մեծ հեղեղներ առա-
ջացնել զանազան տերերում։ Թիֆլիսի քաղա-
քային դուման, նախալգուշութեան համար որո-
շել է Սաղի մասսում, ուր Կուրի ջուրը չառ
մնագամ հեղեղում է տները, ունենալ պատրաս-
տի նաւալիներ և բանուրներ մարդկանց օգնելու
համար։ Բացի դրանից այլաք է պատրաստվեն
վրաններ, որտեղ ժամանակաւոր պատուալրան
կը գտնեն ընակարաններից զրկված մարդիկ։

Մեզ ինողրում են տպագրել հետևեալը, «Թիգ-
լիսի երկրորդ էժանագին» գրադարանը չնորհա-
կալութիւն է յայտնում տիկին Եփեմիա Ծատու-
րեանին և պ. Տէր-Ղեռնդեանին, որոնցից առա-
ջնը նուիրել է տամն բութի, իսկ վերջինը, գրա-
դարանի օգտին ժողովել է ծանօթների մէջ՝ 40
բութի»:

Կ. Պօլսի «Բիւզանդիոն» թերթի խմբագիր

սնեալ կերպով է բնորոշում. «Տաճկական մայրաքաղաքում «Քիւզանդին» թերթը լրյու տեսնելուց յետոյ, գտնվեցին մարդիկ (ոմն Շահնաղար), որոնք ձգտեցին նրա և նրա խմբագիր-հրատարակիչ Քիւզանդ Քէշեանի անունը քաղաքացիականացնել Կովկասում: Մանաւանդ Էջմիածնի գանձարանից անյայտացած առասպեկտական 200,000 րուբլին, որ կապված էր «Քիւզանդին» թերթի հետ, բաւական ազմուկ հանեց: Երկար տարիներ բնակած լինելով Կ. Պօլսում և ծանօթ լինելով թէ Քիւզանդ Քէշեանին և թէ նրա ուղղութեան ու վարք ու բարքի հետ, թոյլ տուէք մի քանի խօսք ասել նրա մասին: Բ. Քէշեանին Բնչ անուն էլ տան, թերևս յարմարի, բացի նայ անունից, որը, բացի իր գործակիցներից ոչ ոք չէ տալիս նրան: Ասացին, որ նա լու հրապարակախօս է: Հրապարակախօսութիւնը, որպէս և ճառախօսութիւնը պօլսեցիք ուրիշ կերպ են հաս-

կանում: Իսյց իսլամէս բառախսաղութիւնը հրապարակախօսութիւնն չէ, ոչ էլ մեծ բան է գլուխանիւական թերթերից թարգմանած մտքերը հայցրած՝ խմբագրականի տեղ դնելը: Այդ է Քէշեանի հրապարակախօսութիւնը: Բիւզանդ Քէշեանը Նազրմ-փաշայի մտերիմն էր, իսկ պարտիզակցի Վահանն վարդապետի («Լոյսի» խմբագիր-հրատարակիչ) գաղափարակիցը: Եւ դա յայտնի փաստ է: Բ. Քէշեանը վազուց ձգտում էր «Արևելքը» իր ձեռքը ձգել՝ յայտնի շահերի ծառայեցնելու համար: «Արևելքի» վարչութիւնը այդ գիտնալով զգուշացաւ, իսկ Քէշեանը գաղանի հալածանք սկսեց թէ «Արևելքի» և թէ Եռուսուֆեան եղբայրների դէմք: Կողմնակի ճմանապարհով սպառնական նամակների մասին շատերը գիտեն: Կարծեմ գիտէ և ս. Դզմիրլեանը: Բարթուղմէսոսի տեղապահութեան օրով, նրա մատուցած ուղերձի հրատարակութեան մէջ Բ. Քէշեանը բացարձակ մատնութիւն արեց: Ահա

սովորեց «Արևելքը» և այն կը ի տի կական օրերում, երբ հայի ստուերին գնդակ էին արձակում, Բ. Քէշեանը «Քիւզանդիոն» հրատարակելու արտօնութիւն ստացաւ, որն այժմ իրան է պատկանում և իր ու իրայինների շահերին ծառայում: «Քիւզանդիոնի» ինչ թերթ լմնելը պէտք է պօլսեցիներից հարցնել, ի հարկէ, ոչ բիւզանդիոնականներից, որ նա զըմի ան ական կամ սրա նման մի բան կը նշանակէ: Բ. Քէշեանի կողոդիլիան արցունքին չը պէտք է հաւատալ, նա ունի իր որոշ նպատակը. պօլսեցիք այդ զիտեն և զգուշանում են: Երանի թէ կովկասցիք էլ մի մաս կատար թեահանուէն, որը եկեւուել առջևում:

«Пет. Вѣдомости» լրագիրը հաղորդում է, որ
Պարսկաստանի Աւրմիա քաղաքից ասօրիների
մի պատգամաւորութիւն է եկել Պետերբուրգ
յայտնելու, որ 50 հազար ասօրիներ ցանկութիւն
ունեն ուղղափառութիւն ընդունել: Պատգա-
մաւորութիւնը բաղկացած է չորս հոգուց,
այն, է արքեպիսկոպոս Սարիօնան, Կիլա վար-
դապետը, Սարդիս քաղաքով քահանան և տիրո-

յու Յակոբ Խարբալսահով, որը և թարգման է:

Ազգայնական ատելութիւնը, որ յետադէմ մաս-
ութիւնի մի քանի օրգաններ անցքան եռամսղով ար-
արծում էին, տարաբաղդաբար, սկսել է արձա-
նակ գտնել նաև ուսանող երիտասարդու-
թեան մէջ: Խըրիելի համալսարանի հայ և վրա-
ի ուսանողների մէջ նորերս ընդհարումներ են
դատաճել և ինչպէս պատմում է «Երշ. ԵՅԴՈ»
ուղիբը, պատճառը հետեւալն է. Մի երեկոյթի
ամանակ հայ ուսանողը կերպակութը ուսում է
չ մէջ պատառաքաղով, այլ դանակով. վրումկե-
ով այդպիսի գետօկրատիական ձեփց՝ վրացի-ու-
անողը խփում է հայ ուսանողի ձեռքին և վիրա-
սում նրան: Եւ ահա այդ առիթ է գառնում
ի ընդհանուր կռւի հայ և վրացի ուսանողների
մէջ. կովկասցի բոլոր ուսանողները, բաժանվելով
ոզգայնական խմբերի՝ առանց ամաչելու՝ մաս-
ակցում են այդ կռւին: Արձարծել աղդայն ա-
նան թշնամութիւն և այդ թշնամութիւնը հասց-
ել նոյն խոկ կռիների, —դրանից աւելի մեծ
արոցական անկամն՝ դժուար է երեսակայել ու-
անողութեան մէջ...

ԼՕՒԻՒՑ մեղ գրում են, «Անա մի ամիս է, որ
այս կողմերում տարածվել է կարմրուկ հիւան-
ուռիւնը։ Վարակված գիւղերում համարեա-
ռուն չը կայ, որ գննէ մի երեխայց հիւանդ չու-
նեայց։ Զը նայելով զրան՝ ոչ մի բժշկական օգ-
ուռիւն չը կայ, ամեն ինչ թողնված է բաղդին
ճակաառապնեն»։

ԱՐՏԱՎԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

•ՏԱԼԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Մարտի 4-ից (ն. տ.) սկսած Հուօմում և ի-
ուղական միւս գլխաւոր քաղաքներում մեծ հան-
էսով տօնվեց իտալական սահմանադրութեան
0-ամենայ յօրելեանը: Խնչպէս յայտնի է, 1848
Եւն, Սարդինիայի թագաւոր Կարլ Ալբերտ,
այժմեան թագաւորի պապը, սահմանադրութիւն
նորհեց սարդինական, կամ այժմեան իտալական
թագաւորութեան և որովհետեւ այդ սահմանա-
դրութիւնը այժմեան իտալական թագաւորու-
թեան ստեղծման գլխաւոր պատճառներից մէկը¹
պարձաւ, ուստի և Խտալիան ամենայն իրաւուն-
ութ որոշեց տօնել իտալական սահմանադրու-
թեան յիմնամենայ յօրելեանը: Խտալական պար-
ամենատը և սենատը ուղերձներ ներկայաց-
վն Ռամբէրտօ թագաւորին, որոնց մէջ շետերով
1848 թ. մարտի 4-ին հրատարակված սահմա-
նադրութեան նշանակութեան վրա, ասում են.
Սահմանադրութեան յայտարարութիւնը մի քիչ
աւելի առաջ ընկաւ, քան ազգային անկախու-
թեան համար հրատարակված պատերազմը, ո-
ւովհետեւ ձեր տոնմի դիտաւորութիւնների մէջ,
խնչպէս և խտալական ազգի զգացումների և
այնկութիւնների մէջ ազգատութիւնը երբէք չէ
աշաճնովել տնկախութիւնից: Պատերազմի փո-
խութական պատահարներից յետոյ սահմանադրու-
թիւնը մնաց Պիէմոնտի սրատում իբրև լուսաւոր
շահմանաբան, որին վատահովեամբ դիմում էին
աղոր հրատահարվածների սրտերը: Սահմանա-
դրութեան վահանի տակ պատրաստվեց այն
ընթը, որի օգնութեամբ կատարվեց հայրենիքի
իրազումք:

Քրիժէ միաժամանակ Հոռոմում մեծ շտգրով
լատարվեց և Լէօն XIII պապի քահանայապե-
ռութեան քսանամեայ տարեգարձը: Եւրօպայի
և Ամերիկայի զանազան կողմերից մեծ բազմու-
թիւն էր եկել չնորհաւորելու այդ յօքեկանը:
Ֆէ Ումբէրտո թագաւորը և թէ պապը այդ յօ-
ւեկանների առիթով քաղաքական ճառեր ար-
ուասնեցին. առաջնուը փառաբանեց Խտալիայի
իրացումը և յայտարարեց, որ Հոռոմն է խտալա-
կան թագաւորութեան բուն մայրաքաղաքը, իսկ
որկորուրը գանգատվեց հոռմէական եկեղեցու
յաւալի վիճակի մասին, ասելով, որ նա զրկված
է իր նախկին իշխանութիւնից: Եւ այդպէս, Եւ-
րօպայի առաջ նորից հանդէս եկաւ երկու Հոռօմ.
Բնոր՝ պապական, համաշխարհային—պատմական,
մուսը՝ արքայական—խտալական, նոր ժամանակի
հստուութ: Թէ պապը և թէ թագաւորը ահազին
օվացիաների առարկայ զարձան խտալայինների
լուրմից: Թագաւորի հայրենասիրական ճառը մեծ
ոպաւորութիւն է թողել ամբողջ երկրում, թէն
Եւրօպայում շատ անաջող են գտնում այն համե-
րատութիւնը, որ արել է թագաւորը, նկարա-
լիքելով կրկու Հոռօմ—մինոր հինոր, համաշխարհա-

ական, մրւաբ ժամանակ
լանը:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԳԻԱՑԻՑ
